# ԱԶԳԱՅԻՆ

## Պ. Մ. ՍԱՆԱՍԱՐԵԱՆՑ

Ազգասէր Պ. Մկրտիչ Սանասարեանց՝ Ս. Աթոռոյս տպարանի ընծայեց մի մեծ ձուլածոյ շարժական ձուլարան՝ կրկին տեսակ հալոցներով, մին՝ հասարակ տառեր և միւսն՝ զանազան աստիճանի և ձևերու գլխագրեր, ծաղկագրեր և ծաղիկներ եւն ձուլելու մեքենայ (բրիդկաղենի), նա և ութն տեսակ կաղապարներ (ֆօրմ) այլ և այլ աստիճանաց և մեծութեան տառեր՝ պարապներ և գծեր ձուլելու։

Նոյն Ազգասէր Պարոնը՝ 'ի լուսաւորութիւն և 'ի յառաջադիմութիւն Ազգին՝ և 'ի պայծառութիւն և 'ի փառաւորութիւն առաքելական Մայր Աթոռոյս իւր զգացած սիրոյ և եռանդեան յաւէտ գործովք և արդեամբք երևելի հանդիսանալով և փայլելով՝ լուսաւոր և պարզացած գաղափարներով և բարի և նախանձելի նպատակներով լիացած և բորբոքած, մեր և համայն սիրելի Ազգայնոցս իրաւացի գովեստները և երախտագէտ զգացմանց և համակրութեանց հաւաստիքը ընդունելու և վայելելու արժանաւորութիւնը իրաւամբք ժառանգած ունի, զոր հրապարակաւ ամսագրոյս միջոցաւ յայտնել քաղցր և մխիթարական պարտք կ՚զգամք 'ի լուր աշխարհի. և միանգամայն կը բարեմաղթեմք Սանասարեանցի նման ազնուասիրտ և՛ ազգասէր և՛ բարեզգաց ճշմարիտ Հայորդւոց թիւը բազմապատկեալ և յաճախեալ տեսնել մեր բազմակարօտ Ազգի մէջ. որպիսեօք միայն կարէ Հայաստան իւր մեծ ցաւոց մէջ մխիթարութիւն գտնել, և իւր մանկանց լուսաւորութեան շնորհիւ և ազգային դաստիարակութեամբ զարգացած յառաջադիմել և բարի ապագային ժամանել։

Պ. Սանասարեանցի բարեգործութիւնք և սիրալի նպատակք՝ Ս. Աթոռոյս տպարանին նուիրած բաւական կարևոր մայրից՝ գործեաց և մեքենայից, և մի քանի ուսումնակարօտ ազգային մանկանց և երիտասարդաց նպաստելու և բարեբար հանդիսանալու և յլն առաքինութեանց մէջ չերևակաման երբէք, որպիսի՛ք տակաւին իւր վսեմ և բազմանձկալի մտադրութեանց երախայրիք միայն կարեն համարուիլ. ուստի մեք առ այժմ այսքան բաւիւք բաւականանալով կը լռեմք և կը թողումք ապագային՝ ըստ նորուն սխրագործութեանցն գրուատել և անմահացուցանել անունը և յիշատակը Ազգ. կենաց անցից պատմութեան մէջ, մանաւանդ զի գործքն և արդիւնքն առաւելապէս ինքնին կը հանդիսացուցանեն բարեբարին արժանաւորութիւնքը ըստ ամենայնի։

## ԻՇԽԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ՄՈՒՐԱՏ-ՊԷԿ

Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիոյ վիճակին Առաջնորդ Գեր. Գէորգ Արքեպիսկոպոսի Մկրտչեան մայիս 26 ամսաթուով յայտարարութենէն կ՚իմանամք, զի Հնչեշտ գիւղաքաղաքի Հայոց Ս. Աստուածածին փայտաշէն եկեղեցին՝ զոր կառուցած էր հանգուցեալ իշխան Մանուկ Պէյ, այժմ յոյժ հնացեալ և քայքայեալ լինելով, այնպէս զի՝ Եկեղեցական արարողութիւնք և ծիսակատարութիւնք անգամ 'ի նմին կատարել վտանգաւոր և

երկուղալի եղած է, ըստ խնդրանաց բարեպաշտ մերայնեայ ժողովրդականաց տեղւոյն և ըստ միջնորդութեան նոյն Գ․եր. Կառավարչի վեհակին՝ Պայծառափայլ իշխան Յովհաննէս Մուրատ-Մանուկպէկ՝ բարեհաճած է կառուցանել 'ի նմին իսկ տեղւոջ՝ նոր քարուկրեայ եկեղեցի մի իւր սեպհական ծախիւք և արդեամբք 'ի յիշատակ հին և նոր ննջեցելոց իւրոց։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ

Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ.

(Շարունակութիւն)

Ջրաբերդ կամ Զանգեզուր գաւառակ։

| | ր. | կ. |
|---|---|---|
| Հասարակութիւն Մարաղայ գեղջ . . | 65 | |
| Մարաղայ գեղջ հասարակութեան կանայքն | 3 | 31 |
| Մարալեան գիւղացի Առստամ Տօնիեան և իւր մայր Մարիամն . . . . . | 10 | |
| Սարաւեցի Նոր մկրտեալ Յովհաննէսն . | 2 | |
| Հասարակութիւն Սարաւ գեղջ . . . | 45 | |
| Մասնաւոր գիւղօրայքն՝ Հասան-ղալայ, Մարալեան, և Խօրուղլու . . . . | 20 | |
| Հասարակութիւն Ներքին Շէն գեղջ . | 50 | |
| Հասարակութիւն Վերին Շէն գեղջ . . | 30 | |
| Ներքին Շինացի Շահում Առաքելեան . | — | 70 |
| Հասարակութիւն Գիւլստան գեղջ . . | 12 | |
| Խրխափորեցի Բէկլար բէկ և իւր կին Եղիսաբէթ . . . . . . . . . | 8 | |
| Հասարակութիւն Խրխափոր գեղջ . . | 7 | |
| Բէուկ-բէկ մելիք Բէկլարեանց . . | 6 | |
| Հասարակութիւն Էրքէջ գեղջ . . . | 20 | |
| Հասարակութիւն Մանուչեցիք գեղջ . | 12 | |
| Հասարակութիւն Ղարաբուլաղ գեղջ . | 7 | |
| Հասարակութիւն Բողլուխ գեղջ . . | 5 | |
| Ղարաչինարեցի Սարգիս մելիք-Ստեփանեան . . . . . . . . . . | 2 | |
| Ղարաչինարեցի Թէմուրազ Բէկ մելիք-Բէկլարեանց . . . . . . . | 25 | |

| | ր. | կ. |
|---|---|---|
| Հասարակութիւն Ղարաչինար գեղջ . | 38 | |
| Բարխեցի Մովսէս քահանայ Մկրտչեան Տէր Աբրահամեանց . . . . . . | 3 | |
| Հասարակութիւն Բարխ գեղջ . . . | 15 | |
| Նոր Շինացի Մագթաղ, Զաքի և Սոփիայ Ոսկանեան . . . . . . . . . | 3 | |
| Հասարակութիւն Նոր-շէն գեղջ . . | 13 | |
| Հասարակութիւն Թրիշեցիք գեղջ . . | 50 | |
| Հասարակութիւն Ներքին-Զայլու գեղջ | 13 | |
| Հասարակութիւն Վերին-Զայլու գեղջ . | 16 | |
| Վերին-Զայլուի կանայքն . . . . | 5 | 81 |
| Վերին-Զայլուեցի Աստուածատուր և գանձապետ Յովսէփ Եօկարեան . . | 6 | |
| Հասարակութիւն Մատաղիս գեղջ . . | 5 | |
| Կուսապատեցի Ցարութիւն բէկ Աթաբէկեան . . . . . . . . . . . | 3 | |
| Հասարակութիւն Մոխրաթաղ գեղջ . | 17 | |
| Հասարակութիւն Սէյսուլան գեղջ . . | 18 | |
| Հասարակութիւն Մաղաւուզ գեղջ . | 10 | |
| Հասարակութիւն Վարնկաթաղ գեղջ | 5 | |
| Հասարակութիւն Մեծ-շէն գեղջ . . | 16 | |
| Հասարակութիւն Գիւլաթաղ գեղջ . | 12 | |
| Հասարակութիւն Ջանխաթաղ գեղջ . | 12 | |
| Հասարակութիւն Տօնին-շէն գեղջ . . | 4 | |
| Հասարակութիւն Ղազանչի գեղջ . . | 6 | |
| Հասարակութիւն Կուսապատ գեղջ . | 85 | |
| Ի Խաչէն գաւառակէ . . . . . . | 48 | 28 |

(Շարունակելի)

Պ. ԳՐԻԳՈՐ Ս. ԹՈՒՇՄԱԼԵԱՆՑ՝ ԵՒ ՆՈՐՈՒՆ ԹԱՂՄԱՆ ՑՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԵՐՑԵԱԼ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ.

Անցեալ ամսոյ 7-նին՝ Մոզդոկի մեր սիրելի Ազգայնոց երևելիներէն՝ Պ. Գրիգոր Ստեփանեան Թուշմալեանց՝ իւր մահկանացու կենաց ընթացքը կնքելով, յաջորդ օրը արժանաւոր շքով յուղարկաւորութեան հանդէսը կը կատարուի, և մարմինը 'ի հող գերեզմանի կ'ամփոփուի։

Նոյն օրը բարեկրօն Յովհաննէս Աւագ Քահանայն Խոսրովեանց՝ քարոզին Ս.